



**Կառուցելով
բարեկեցիկ աշխարհ**

Ernst & Young CJSC
1 Northern Ave., office 27
Yerevan, 0001, Armenia
Tel: +374 (10) 500 790
+374 (10) 500 705
Fax: +374 (10) 500 706
www.ey.com/am

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան 0001
Հյուսիսային պող. 1, գրասենյակ 27
Հեռ. +374 (10) 500 790
+374 (10) 500 705
Ֆաքս. +374 (10) 500 706

Անկախ աուդիտորական եզրակացություն

Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի հիմնադիրներին և Հոգաբարձուների խորհրդին

Մենք աուդիտի ենք ենթարկել Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի (այսուհետ՝ «Հիմնադրամ») կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2014թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, 2014թ.-ի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, ֆոնդերում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ պարզաբանող ծանոթագրություններ:

Ֆինանսական հաշվետվությունների համար աուդիտի ենթարկված անձի պատասխանատվությունը

Աուդիտի ենթարկված անձի ղեկավարությունը պատասխանատու է սույն ֆինանսական հաշվետվությունները ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան պատրաստելու և արժանահավատ ներկայացնելու, ինչպես նաև այնպիսի ներքին վերահսկողության համակարգի համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ պատրաստելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է, մեր կողմից անցկացված աուդիտի հիման վրա, կարծիք հայտնել ֆինանսական հաշվետվությունների արժանահավատության վերաբերյալ:

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտները պահանջում են, որ մենք հետևենք էթիկայի պահանջներին և պլանավորենք ու իրականացնենք աուդիտը ֆինանսական հաշվետվություններն էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ հավաստիացում ձեռք բերելու նպատակով:

Աուդիտը ներառում է ընթացակարգերի իրականացում ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ աուդիտորական ապացույցներ ձեռք բերելու նպատակով: Ընտրված ընթացակարգերը հիմնված են աուդիտորի դատողության վրա՝ ներառյալ խաբեության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկի գնահատումը: Այս ռիսկը գնահատելիս աուդիտորը դիտարկում է ֆինանսական հաշվետվությունները պատրաստելու և արժանահավատ ներկայացնելու համար կիրառվող ներքին վերահսկողության համակարգը, տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր մշակելու, սակայն ոչ ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության մասին կարծիք արտահայտելու նպատակով: Աուդիտը ներառում է նաև կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխանության, ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների հիմնավորվածության, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք գտնում ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:



Կառուցելով
բարեկեցիկ աշխարհ

Կարծիք

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Հիմնադրամի ֆինանսական վիճակը 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, 2014թ.-ի ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն:

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ

15 հունիսի, 2015թ.

Աուդիտի բաժնի հիմնադիր գործընկեր

Գլխավոր տնօրեն՝ Հ. Սարգսյան՝
ի դեմս լիազորված անձ Է. Հայրապետյանի
(գործող 31.07.13թ. տրված լիազորագրի հիման վրա)



Սերգեյ Տասկան

Է. Հայրապետյան

**Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն
2014թ.-ի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար**

| | <i>Ծան.</i> | <i>2014թ.</i> <i>(հազ. դրամ)</i> | <i>2013թ.</i> <i>(վերահաշվարկ- ված)</i> <i>(հազ. դրամ)</i> |
|---|-------------|-------------------------------------|--|
| Եկամուտ ստացված շնորհներից | 5 | 199,000 | 317,618 |
| Ֆինանսական եկամուտ | 6 | 191,832 | 213,576 |
| Տոկոսային ծախսեր ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունների գծով | | (79,889) | (61,815) |
| Այլ եկամուտ | | 5,763 | 8,115 |
| Վարչական ծախսեր | 7 | (274,243) | (323,444) |
| Արժեզրկումից կորուստներ | 8 | (871,132) | (369,376) |
| Վարկերի սկզբնական ճանաչումից վնաս | | (4,562) | - |
| Զուտ օգուտ փոխարժեքային տարբերությունից | | 3,226 | 1,687 |
| Վնաս մինչև շահութահարկ | | (830,005) | (213,639) |
| Շահութահարկի գծով (ծախս)/ փոխհատուցում | 9 | (49,720) | 28,085 |
| Ընդամենը համապարփակ վնաս | | (879,725) | (185,554) |

Ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել և վավերացվել են Հիմնադրամի ղեկավարության կողմից՝

Տնօրենի ժ/պ՝

Ալեքսանդր Քալանթարյան

Գլխավոր հաշվապահ՝

Գոհար Հովհաննիսյան

15 հունիսի, 2015թ.



**Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
2014թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ**

| | Ծան. | 2014թ. | 2013թ. | 2012թ. |
|--|------|------------------------|----------------------------------|----------------------------------|
| | | (հազ. դրամ) | (վերահաշվարկ-ված) (հազ. դրամ) | (վերահաշվարկ-ված) (հազ. դրամ) |
| Ակտիվներ | | | | |
| Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ | 10 | 2,897 | 8,061 | 13,202 |
| Ներդրումներ ծրագրերում | 11 | 291,685 | 1,062,545 | 1,318,146 |
| Հետաձգված հարկային ակտիվներ | 9 | – | 33,529 | – |
| Տրված փոխառություններ | 12 | 415,848 | 407,000 | 328,000 |
| Ոչ ընթացիկ ակտիվներ | | 710,430 | 1,511,135 | 1,659,348 |
| Ներդրումներ ծրագրերում | 11 | 64,968 | 191,250 | 190,447 |
| Տրված փոխառություններ | 12 | 39,400 | 50,863 | 13,419 |
| Կանխավճարներ | | 11,180 | 7,252 | 8,933 |
| Պաշարներ | | 570 | 300 | – |
| Առևտրային դեբիտորական պարտքեր | | 4,860 | 8,064 | – |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 13 | 761,571 | 511,747 | 283,497 |
| Ընթացիկ ակտիվներ | | 882,549 | 769,476 | 496,296 |
| Ընդամենը ակտիվներ | | 1,592,979 | 2,280,611 | 2,155,644 |
| Ֆոնդեր | | | | |
| Հատկացումներ հիմնադիրներից (Կուտակված վնաս)/Զբաղիված շահույթ | | 1,513,896 (782,372) | 1,513,896 97,353 | 1,213,564 282,907 |
| Ընդամենը ֆոնդեր | | 731,524 | 1,611,249 | 1,496,471 |
| Պարտավորություններ | | | | |
| Վարկեր և փոխառություններ | 14 | 586,318 | 548,270 | 425,037 |
| Ստացված շնորհներ | 15 | 56,311 | 8,061 | 13,085 |
| Հետաձգված հարկային պարտավորություններ | 9 | – | – | 40,442 |
| Ոչ ընթացիկ պարտավորություններ | | 642,629 | 556,331 | 478,564 |
| Վարկեր և փոխառություններ | 14 | 41,840 | 38,999 | 32,980 |
| Ստացված շնորհներ | 15 | 166,272 | 9,825 | 120,935 |
| Այլ վճարվելիք գումարներ | | 3,117 | 13,317 | 14,233 |
| Ընթացիկ պարտավորություններ շահութահարկի գծով | | 7,597 | 50,890 | 12,461 |
| Ընթացիկ պարտավորություններ | | 218,826 | 113,031 | 180,609 |
| Ընդամենը պարտավորություններ | | 861,455 | 669,362 | 659,173 |
| Ընդամենը ֆոնդեր և պարտավորություններ | | 1,592,979 | 2,280,611 | 2,155,644 |

Գից ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը: